Կովերը մայում են, եւ էշը շարժում է իր ականջները:

Ցիսուսը ծնուել է:

* * *

Ննդեան տօնը ձիւնի վրայ ման է գալիս Հայաստան աշխարհում:

Ձերմակ շապիկ է հագել եւ բուրվառը ձեռքին ճօճում է լեռների առջեւ, դաշտերի վրայ, բուք ու բուրանի մէջ:

Սարդարապատը բաց է արել իր մաշած Աւետարանը, եւ անոթի մի դայլ սառը խօսքեր է կարդում, երկնքին նայում ու ոռնում: Արարատը իր բոցավառ գլխից վայր է քաշում շըղարշը, իսկ գիւղացին զարմացած նայում է, փափախը հանում եւ մաղերի վրայ թառած ճառագայթները շոյում:

Միստիկ ապրումի երկրաշափական եռանկիւնին մխրճւում է հողերի հսկայ կուտակումների մէջ, մագլցում Ծաղկաձորի վրայով դէպի Ախտայ եւ Սեւանայ լճի առջեւ երփներանգ փունջի նման բացւում: Կղզին, երեք դմբեթների միջից, նայում է վեր եւ, այնտեղ խորը, ջուրի տակ, իր տենդոտ ոտքերը ծունկի բերում:

Ձորերը ականջ են դնում, եւ անձայն մի երգ ձիւների վրայ պսպղում է ու քամիների հետ աղամանդի փոշի բարձրացնում:

Համաշխարհային քարտէսի վրայ Հայաստանը կուրծքը դուրս է ցցել, լեռը լեռան վրայ բարձել եւ ոսկրուտ ուսերը շարժում է անհանդիստ հսկայի նման:

Ամէն մի խրճիթում մի Ցիսուս է ծնուել: Օճախների մէջ ածուխների վրայ փչում են, որպէսզի բուքը ներս չմտնի: Աստուածամօր անկողնի մօտ յարդ են դրել, քուրսին վառել, եւ պառաւ մամը երախան փաթաթել է տաք շորերի մէջ: Ծերերը չիբուխ են ծխում, իսկ երիտասարդ կանայք քանդակներով զարդարուած օրօրոցն են օրօրում, որպէսզի սրտերի մէջ բերկրանքը եւ վիշտը հաւասարակշռուին:

Գիւղերի վրայ Արագածը լռութիւն է շարժում:

Զանգեզուրը լարել է իր թմբուկները: Երբեմն հովը սրածայր գագաթներից թաւալգլորւոր վայր է իջնում, եւ թմբուկները սկսում են ձայնել, անտեսանելի բանակներ առաջնորդելով:

Մարդիկ լսում են եւ մտածում. Մշոյ դաշտը շարժւում է: Իրականին մէջ Մշոյ դաշտը չէ, այլ Վանայ ծովն է, որ Ախթամարի քարերի վրայ լաց է լինում, եւ որովհետեւ արեւմըտեան օդը ճնշուած է, բուքը վայրկեանը հազար մղոն Եփրատից սուրում է դէպի Սիփան, դաշտի վրայ պար բռնում, ծովի հետ հեծկլտում ու գալիս, գլուխը զարնում, թեւերը թափ տալիս, խենթացած թռչունի նման, Սիւնեաց աշխարհի լեռների դէմ:

Մեղրիից հինգ ժամ հեռու, վերը, լեռան լանջքին, կիսաթաղ խրճիթի առջեւ պառաւ մամը փաթաթուել է ցնցոտիների մէջ, աչքերը յառել դէպի վար՝ սպասում է երեք մոգերին: Բուքը զարնում է աչքերին, կրծքին բռունցքներ խփում, երեսը խածնում — ոչինչ չի երեւում:

Ձերմակ փոշի: Վայրի կատուների մլաւոց: Մամը վախում է եւ աղօթում:

Վարը, խսկապէս, երեք ձիաւոր մագլցում են լեռը, որպէսզի հասնին պատարագին եւ հասնին Խթումին:

Ձիերը մխրճւում են ձիւնի մէջ, կանգ առնում, հաղում:

Քամին ոռնում է, ձիւնի ամպեր կուտակում եւ ճամբան ծածկում:

Հինգ հազար հրեշտակների հետ, քամու հետ, բուքի հետ — եափունջին սառել է, տաք հացի հոտ է գալիս — ձիաւորները քաշում են սանձերը — օդնէ՛ մեզ Տէրը — մտրակում են ձիերը, բայց ո՞ւր է ճամբան:

Թոնիրը վառ է, մամը միայնակ: Ձիւնը ձի է, քամին մտրակ:

Մէկը ասում է.

— Աստղը ձերմակ է, մամը միայնակ է:

Միւսը ասում է.

— Տղան ծնել ա...ջերմը ինձ վառել ա: Տուէք տղուն, ջերմը որ ինձ վառել ա...

Իսկ երրորդը.

— Եթէ մեռնեմ, տարէք մօրս խունկը եւ հացը...

Ու Սեւանից մինչեւ Աշտարակ, Մուշից մինչեւ Գորիս, մինչեւ Գիւմրի, մինչեւ Լոռի

Հայ մատենագրության թուանշանային գրադարան